Օրհնեալ է Տէր, զի Ձեր և զմուտս յարարս գործոց գովմի,
Բարձրացուսցէ զեղջիւր փառացդ 'ի սփոփանս Սիօնի.
Հոգւով շնորհաց և զօրութեան իմաստութեան հանճարոյ,
Մի՛ արասցէ զՁեզ 'ի շրջանս երկար աւուրց խնկելոյ,
Հա՛պա և դուք յոր սուրբ տօնիս հանդիսադիր Բարերարք,
Օրհնեցէք կեանս Հօր մեր Մեծի պահել զՍա անվթանգ.
Սա 'ի հովուել արդարութեամբ և իրաւամբ զիւրն զհօտ,
Դալար 'ի վայրս յօրէնս ամբիծս պատուիրանաց անաղօտ,
Նոր Սիօնի յառաջ մատիք մանկունք 'ի ձայն օրհնութեան,
Սա սուրբ Հոգւին զօրհներգութեամբ զերգ վէր երգել միաբան.
Կեցցէ՛ Տէր մեր. միշտ անսասան յաթոռ սրբոյն Գրիգորի,
Լրութեան Ազգիս Եկեղեցւոյ փառք և պարծանք Հայկազնի.

Հորինեաց և Ընծայեաց
Սարկ. Արշակ Տէր Ղազարեանց.

---

## Քրիստոսապսակ Մեծ Հայրապետ
## եւ
## Արքադուստր Հանդիսականք

Զարթիր զարթիր ձոխ Արարատ և ամպաձեմդ Մասիս,
Եւ Հայաստան խրախացիր 'ի մեծաշուք 'ի տօնիս.
Արքադուստր ակումբք չքնաղ ժողովրդոց Հայկազեան,
Հրճուեցարուք հոգենուագ պէս պէս երգօք տաղաղեան,
Զի քաղցր է մեզ այսօր յայտնել զսրտից մերոց զցնծութիւն,
Եւ զի 'ի ձահ հայցել 'ի քէն զառատաբուղխ օրհնութիւն.
Քեւ գլուխ օծեալ. քեւ սատ հրճուիմք մեք խնդութեամբ անկեղծիկ
Եւ քեւ յաւէտ զուարթացին մերս հայրենեաց սուրբ տեղիք.
Անեղն իսկ յանտրամական յիւրում բնութեան գերբնական,
Ընդ գործովք յաւուրս տօնիդ շարժի 'ի խինդ բերկրական.
'Ի վաղնջուց չունէաք մեք թագակորոյս յԱրարատ
Պարթևազնեայ խնամօղ Ազգիս և Հովուապետ գթառատ,
Այսօր հրեշտակք ուրախանան գունդք ընդ գնդից 'ի յերկին,
Աննիւթական առեալ տաւիղ զերգս յօրինեն քաղցրագին.
Դասք Գրիգորեանց դասք Ներսիսեանց դասք Սետորայ խմբովին,
Քեւ նոր իմն ուրախութեամբ փառս ձօնեն Անեղին.

Եւ մեք յաստուստ խմբովին սուրբ գովելով տօնեալ սրտաթինդ,
Ներբողեմք 'ի բարձր եթեր զոյգ ընդ մաղթանս փառք 'ի խնդ.
Բանահիւսեալ գերդ և գնդրող միաբերան քաջոլոր,
Աւետեսցուք հանուրց Հայոց Ներսէս զգործս փառաւոր,
Գուքո՞վ սեպուհ Խոսխոռոսք և Վարդապետք բազմերամ,
Սարկաւագունք մնացեալ Սննկունք նորոյս կտակի համակամ.
Թարգմանական քաջատոհմիկ դուք ժողովուրդք տիրասէր,
Աւրախաւիր տրոփմամբ սրտի, երգեցէք զհոյլս անվեհեր,
Գիտէ՞ք արդեօք թէ վասն ո՞յր է գեղեցկաշուք այս հանդէս,
Կամ վասն ո՞յր լինին աստէն հոգեպատար խնդք պէսպէս.
Աստուածարեալ Հայրապետին է այս տօն ցնծութեան,
Շնորհաւորել փութացէ՛ք օն սերունդք Հայկայ միաբան.
Շնորհաւոր Ներսէսդ լիցի սերկեանս տօն սրբենի,
Երկարասցի կենացդ թել յօգուտ Ազգիս խղճալի.
Դարուց 'ի դարս համբաւեսցի Քոյին անուան մեծութիւն,
Յորդւոց յորդիս թո՛ղ պանծասցի Ներսէսդ գործոյ բարութիւն.
Քու անձկալի մերս հայրենեաց ձեռն դաժան յուրատև,
Փոխարկեսցի 'ի միշտ Գարուն և 'ի պայծառ լոյս արև.
Եւ բուրաստան՝ զորոյ զծաղկունս արդ սերմանէք աննախանձ,
Տաճարն ասեմ ձոխ իմաստից տացէ պտուղս հայրենեաց,
Այնու լիցի հալածական սուգ վաղեմի թաղծութեան,
Եւ սերունդք նոր սրտափախագ գայցեն 'ի լոյս գիտութեան.
Եւ Հայաստան որրան նախնեաց այժմիկ տխրամայի,
Պայծառասցի որդւովք ուսեալ նախկին փառօք պճնեալ.
Դու մեր Աւրև. դու մեր պսակ և գաւազան ազգին,
Խագ պարծանաց թագակորոյս Ասքանազեան քաջ ազգին.
Դու մեր գլուխ Աննէզանձօն՝ դու մեր Աթոռ լուսափայլ,
Գահակորոյս ազգիս Հայոց կոթող հզօր պարգևեալ.
Կեցցէ՛ Հայր մեր խաղաղ կենօք, կեցցես այո ընդ երկար,
Քու աղջամուղջ տգիտութեան դարձցի 'ի լոյս մշտավառ.
Ուսումնասէրջ Հայկեան մանկտիք և զարդարեալ զմիտս իւրեանց,
Դասեսցեն քոյդ զՆերսէս անուն 'ի կարգս անմահ Թարգմանչաց.

Ուրարակիր Գրիգոր Մաթէոսեան.